ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի ամանորյա շնորհավորանքը

Հարգելի՛ բարեկամներ,

2017 թվականն ավարտվեց, մեզանից յուրաքանչյուրը ևս մեկ տարով հարստացրեց իր կենսագրությունը: Մեր ընտանիքների ու մեր հայրենիքի, ամբողջ մարդկության համար ևս մեկ տարի թողեց իր անջնջելի հետքը: 365 օրերի շարանում հասցրեցինք աշխատել, պայքարել, ձգտել, կերտել ու կառուցել: Աշխարհն ապրեց վատ ու լավ բազում իրադարձություններ, որոնք իրենց անդրադարձը ստացան մեր սրտերում, մեր ապրումներում ու կենսակերպում: Շատերի համար անցյալի գիրկն անցած տարին սահեց երջանիկ ակնթարթի պես, ոմանց համար ձգվեց երկար ու տանջալից: Ամեն ինչ կախված է նրանից, թե հարափոփոխ մեր ժամանակներում մեզ ինչ բաժին հասավ, ինչ փորձությունների միջով անցանք, ինչպես հաղթահարեցինք դժվարությունները, ինչ ձեռքբերումներ արձանագրեցինք և որքան լավատես եղանք:

Սիրելի՛ գործընկերներ, ուսանողներ, մեր մեծ կոլեկտիվում էլ, ինչպես ամենուր, գրանցվեցին մեծ ու փոքր, լավ ու վատ իրադարձություններ, սակայն մենք շեշտադրեցինք լավը և հենց դրա վրա փորձեցինք կառուցել նոր ձեռքբերումները: Անհաջողությունները, սակայն, չանտեսեցինք, այլ փորձեցինք դասեր քաղել ու հետևություններ կատարել:

Ինչևիցե, հնի ու նորի սահմանագծին նայում ենք առաջ, տոգորվում հույսով ու դրական սպասումներով, վառ գալիքի լույսի մեջ տեսնում մեր նորօրյա հաջողություններն ու հաղթանակները:

Իսկ մեր հաղթանակները կերտողները մենք ենք. բոլոր նրանք, ովքեր բարեխիղճ աշխատանքով, բանիմացությամբ ամեն օր ծառայում են իրենց ընտրած գործին, ուսանողներն են, ովքեր գալիս են իսկապես ուսում առնելու, գնահատում են իրենց կյանքի լավագույն ժամանակը, իրենց ծնողների ջանքերը և ցանկանում են հասարակության արժանավոր անդամ դառնալ:

Հուսով եմ՝ 2018 թվականը լինելու է բարեբեր տարի, առողջության, խինդ-ուրախության, մեր հայրենիքի համար՝ խաղաղության ու վերելքների ժամանակաշրջան: Համոզված եմ՝ մեր կոլեկտիվն աշխատելու է միասնաբար ու միահամուռ՝ ավելի ամրապնդելով ու բազմապատկելով իր ձեռքբերումները գիտության ու կրթության ոլորտում, մեր ուսանողները ավելի լավ են սովորելու ու առավել մրցունակ են լինելու:

Եկե՛ք ապավինենք մեր ուժին, կամքին ու աշխատասիրությանը, փայփայենք ու իրագործենք մեր լուսավոր ու նվիրական երազանքները, հավատանք բարու, ազնիվի հաղթանակին ու լավատեսությամբ կերտենք գալիքի մեր օրերը:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր